ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե- 1520

« 24 » փետրվարի 2023թ.

ՊՐԻՆՏ ԲՈՔՍ ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Է. ՈՒՄԲՐԵՅԱՆԻՆ

Սույնով ծանուցվում է, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար տպագրական և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ հետևյալ անհամապատասխանությունները.

- ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը հաստատված չեն գործադիր մարմնի ղեկավարի (տնօրենի) էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ հաստատված են այլ անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն հայտով ներկայացված չէ վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ (լիազորագիր),
- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված չէ *հրավերով սահմանված պայմաններին* համապատասխան, մասնավորապես՝
  - դիմում-հայտարարության երրորդ նախադասությունում նշված չէ մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,
  - դիմում-հայտարարության 1)-ին կետում նշված չէ մասնակցին փոխկապակցված անձանց «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/01» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին բավարարելու վերաբերյալ տեղեկատվությունը:
- ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի (Հավելված N 1.2) «1. Կազմակերպությունը» բաժնի «1.3. Հայտարարագրի ներկայացումը» ենթաբաժնի «1.3.2. Հայտարարագրի էջերի քանակը» դաշտում հայտարարագրի էջերի քանակը սխալ է նշված:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկվում է մինչև սույն թվականի **փետրվարի 27-ը ներառյալ** eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնվում է, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում Ձեր հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ **ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ**

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԾՁԲ-23/01» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Գ. Դադիվանյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788